ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 15.1 Գիտության կոմիտեն

1. Գիտության կոմիտեն նախարարությանը ենթակա մարմին է:

2. Գիտության կոմիտեն ղեկավարում է գիտության կոմիտեի նախագահը, որին համաատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

3. Գիտության կոմիտեի նախագահն ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:

4. Գիտության կոմիտեն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) գիտության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ու գիտության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակում.

2) գիտության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի մշակում.

3) գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային, ինչպես նաև միջպետական համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական ծրագրերի մշակում ու դրանց իրականացման կազմակերպում.

4) գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավման ու օգտագործման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակում, գիտական կադրերի պատրաստման նպատակով ուսումնասիրությունների իրականացում և պետական պատվերի ձևավորման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

5) գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ առաջարկությունների մշակում.

6) գիտական և գիտատեխնիկական փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) բնագավառի իրավական ակտերի նախագծերի մշակում.

7) փորձաքննության կազմակերպիչներին և փորձագետներին առաջադրվող պահանջների սահմանում.

8) փորձաքննության բնագավառում պետական հավատարմագրման կարգի և չափանիշների մշակում.

9) պետական փորձաքննության մեթոդական և կազմակերպատեխնիկական հիմքերի մշակում ու հաստատում.

10) փորձաքննության բնագավառում միջազգային համագործակցության պայմանագրերի կնքում.

11) մասնակցություն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ իր իրավասության սահմաններում.

12) գիտության և արտադրության ինտեգրմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացման կազմակերպում.

13) գիտության բնագավառի հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանն ու քննարկմանը սահմանված կարգով մասնակցություն.

14) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների ներուժի համախմբմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում.

15) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, սահմանված կարգով վարչական վիճակագրական ռեգիստրների վարում.

16) ռազմատեխնիկական ծրագրերի մշակման, փորձաքննության և իրականացման մոնիթորինգի կազմակերպում՝ Ռազմարդյունաբերական կոմիտեի և համապատասխան պետական մարմինների հետ համատեղ.

17) գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքագրում, գիտաչափական վերլուծություն, հաշվառման ամբողջական համակարգի ձևավորում և վարում.

18) իր իրավասության սահմաններում գիտության բնագավառի բյուջետային գործընթացի իրականացում.

19) օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 15.2 Բարձրագույն որակավորման հանձնաժողովը

1. Բարձրագույն որակավորման հանձնաժողովը նախարարությանը ենթակա մարմին է, որն ապահովում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծումը և դրանց աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև գիտական աստիճանաշնորհման համակարգի պետական չափանիշների մշակումը:

2. Բարձրագույն որակավորման հանձնաժողովը ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

3. Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահն ունի տեղակալ, որին հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:

4. Բարձրագույն որակավորման հանձնաժողովը՝

1) կազմում և համապատասխան նախարարի հաստատմանն է ներկայացնում այն գիտական մասնագիտությունների անվանացանկը, որոնց գծով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ.

2) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական աստիճանները՝ հիմք ընդունելով մասնագիտական խորհուրդների որոշումները և որակավորման գործի ուսումնասիրությունը.

3) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական կոչումները՝ հիմք ընդունելով բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական (գիտատեխնիկական) խորհուրդների որոշումներն ու գործի ուսումնասիրությունը.

4) նախկին ԽՍՀՄ գիտական աստիճանի վկայագրերի հիման վրա հանձնում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրեր.

5) համապատասխան նախարարին ներկայացնում է եզրակացություն օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի վկայագիրը Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրին համապատասխանեցնելու մասին.

6) համագործակցում է օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների հետ.

7) կազմակերպում է ատենախոսությունների և սեղմագրերի պահպանումը.

8) կազմակերպում է տեղեկագրերի հրատարակումը.

9) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 16. Գիտական կադրերի պատրաստումը և որակավորումը: Գիտական աստիճանները և գիտական կոչումները

1. Գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևերն են՝ ասպիրանտուրա, օրդինատուրա, դոկտորանտուրա և հայցողների համակարգ: Ասպիրանտուրայում, օրդինատուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը սահմանում է կառավարությունը:

2. Գիտական որակավորման իրավական հիմքերը և չափանիշները սահմանում է կառավարությունը, իսկ դրանց իրականացումն ապահովում է որակավորման պետական համակարգը:

3. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են գիտության դոկտորի և գիտության թեկնածուի գիտական աստիճաններ, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

4. Պրոֆեսորի գիտական կոչումը, որպես կանոն, շնորհվում է գիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին հինգ տարիներին զբաղվել են գիտամանկավարժական և գիտամեթոդական գործունեությամբ կամ առնվազն պաշտպանած գիտական հինգ թեզերի ղեկավար են:

5. Դոցենտի գիտական կոչումը, որպես կանոն, շնորհվում է գիտության թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին երեք տարիների ընթացքում բուհական համակարգում իրականացրել են գիտամանկավարժական գործունեություն:

6. Մշակույթի և սպորտի բնագավառներում պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհման կարգը սահմանում է կառավարությունը:

7. Գիտական աստիճանները շնորհում են գիտական կազմակերպություններին առընթեր մասնագիտական խորհուրդները՝ կառավարության սահմանած կարգով:

8. Գիտական աստիճանները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է ~~Հայաստանի Հանրապետության բ~~Բարձրագույն որակավորման հանձնաժողովը՝ կառավարության սահմանած կարգով: Դիպլոմների նմուշները հաստատում է կառավարությունը:

9. Գիտական կոչումները շնորհվում են բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական խորհուրդների որոշմամբ՝ կառավարության սահմանած կարգով:

Գիտական կոչումները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է ~~Հայաստանի Հանրապետության բ~~Բարձրագույն որակավորման հանձնաժողովը: Դիպլոմների նմուշները հաստատում է կառավարությունը:

10. Գիտական աստիճանի և (կամ) գիտական կոչման առկայությունը հաշվի է առնվում գիտական աշխատողի կողմից տվյալ գիտական պաշտոնին հավակնելու դեպքում:

11. Գիտական աստիճանները և (կամ) կոչումները, որոնք շնորհվել են մինչև 1993 թվականը, պահպանում են իրենց իրավաբանական ուժը և հավասարեցվում են դրանից հետո շնորհված գիտական աստիճաններին և (կամ) կոչումներին: